Ռափայել Պատկանյան

Նոր տարի

Երնե՛կ, թե այս Նոր տարին
Վերջ տար հայի ցավերուն .
Չարը կորչեր, ու բարին
Բուն դրներ մեր սրրտերուն:

Երնե՛կ, թե այս Նոր տարին
Ազատ շընչեր Հայաստան,
Եվ շուրջ Մասիս մեր սարին
Փայլեին արտ-անդաստան:

Երնե՛կ, թե այս Նոր տարին
Ոտքի կանգներ Հայաստան,
Եվ կիսաքանդ մեր Կարին
Լիներ քաղաք մեր ոստան:

Երնե՛կ, թե այս Նոր տարին
Հայ սրրտի մեջ ուժ հոսեր,
Ապավինած յուր սրրին,
Հայը քյուրդեն չի սարսեր:

Երնե՛կ, թե այս Նոր տարին
Հայ ազգ ի մի գումարվեր,
Ի գլուխ Կարնո հայ ամրին,

Հայի դրոշակ ծածաներ:

Հայե՛ր, երբեք չերկմըտենք,
Կրկատարվի այդ ամեն,
Եթե իսպառ մենք հանենք
Փոքրոգություն մեր սրրտեն: